Արձանագրություն թիվ 3

27 հոկտեմբերի 2014թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ա.Ռ.Մելքումյան

Ներկա էին խորհրդի բոլոր 8 անդամները:

Օրակարգ

1. 2014-15 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների ամփոփում:
   /զեկ.Մարգարյան Ա./
2. Տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման վիճակի քննարկում:
   /զեկ Ա.Շ.Մարգարյան /
3. Մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում:
   /զեկ Ա.Լ.Չիբուխչյան /
4. Կիրառական արվեստի „Դեկորատիվ - կիրառական արվեստի և դիզայնի” ամբիոնի վարիչի պաշտոնի թափուր տեղի քննարկում:
   /զեկ Ա.Շ.Մարգարյան /

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:Նա ներկայացրեց 2014-15 թթ. ուստարվա I ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները /ամփոփ տվյալները կցվում են արձանագրության տեքստին/: Զեկուցողը անդրադարձավ նաև այն առարկաներին, որոնց միջին առաջադիմությունը ցածր է ֆակուլտետային միջին ցուցանիշից, ինչպես նաև այն առարկաներին, որոնց միջին առաջադիմությունը շատ բարձր է վերջինից: Ա.Շ.Մարգարյանը հանձնարարեց, ամբիոններին պարզելու այդ ծայրահեղությունների պատճառը և ընթացիկ քննությունների ու ընթացիկ ստուգումների ժամանակ բացառել թերացումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- ,,Գծանկարի, գունանկարի և քանդակի'' ամբիոնի վարիչ Ա.Հ.Միրզոյանը: Նա համակարծիք էր ներկայացված նյութին, միաժամանակ նշեց, որ կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ՝ առաջադիմության միջին ցուցանիշը բարձրացնելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հանձնարարել ամբիոններին հատուկ ուշադրություն դարձնել տեսական և գործնական նյութին, երկրորդ ընթացիկ քննություններին և ստուգումներին բարձր արդյունք ապահովելու համար:

2. Հանձնարարել ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացնել առաջարկներ երկրորդ ընթացիկ քննությունների անցկացման ձևի (գրավոր, բանավոր կամ թեստի հետ համակցված տեսական նյութեր) վերաբերյալ:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի դեկան Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց ,որ ֆակուլտետում դասավանդող մի խումբ դասախոսներ դասապրոցեսն անց են կացնում տեխնիկական միջոցների զուգակցմամբ և հաճախ օգտվում են բնագիտական ֆակուլտետի համակարգչային սրահներից: Սակայն տնօրինության որոշմամբ կիրառական արվեստի ֆակուլտետին հատկացվել է մեկ պրոյեկտոր և համակարգիչ(նոթբոիք)՝վիճակը բարելավելու նպատակով: Բանախոսը նշեց,որ <<Արվեստի պատմություն>>, <<Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ>> , <<Էկոլոգիայի բնապահպանության հիմունքներ>> և նմանատիպ այլ դասընթացների ժամանակ հաճախակի պետք է օգտվել դասավանդման նոր մեթոդներից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-,,Գծանկարի, գունանկարի և քանդակի'' ամբիոնի ասիստենտ Ս.Թ. Հովհաննիսյանը: Նա կարևորեց դասավանդման օժանդակ և դիդակտիկ պարագաների դերն ու նշանակությունը և փաստեց, որ վերջիններս օգնում են դասավանդողին ավելի ''հարուստ'' դարձնել դասախոսությունը, իսկ ուսանողներին՝ ավելի դյուրին և ըմբռնելի դարձնել մատուցվող նյութը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Տեսական բնույթի առարկաների դասախոսներին հանձնարարել հավաքել համապատասխան նյութեր և կազմել ներկայացումներ(պրեզենտացիաներ):

Օրակարգի երրորդ հարցի մասին տեղեկատվություն տրամադրեց "Կիրառական արվեստ" մասնագիտության պատասխանատու ,ասիստենտ Ա.Լ.Չիբուխչյանը: Նա նշեց, որ հարցը բավականին երկար ժամանակ քննարկման փուլում է և մագիստրոսական թեզերի ղեկավարները (Ա.Լ.Չիբուխչյան,Դ.Լ. Չիբուխչյան, Ռ. Պողոսյան)մագիստրոսների հետ եկել են ընդհանուր որոշման և ներկայացրել իրենց թեմաները:Կից ներկայացվում է աղյուսակը՝

ուսանող	Ղեկավար	թեմա
Մելիքսեթյան Ա.	Չիբուխչյան Անուշ	Պանո(վիտրաժային մոտեցումներով)
Խաչինյան Լ.	Պողոսյան Ռուզաննա	Երգ երգոց(մետաքսանկար)
Ահարոնյան Ա.	Չիբուխչյան Դոնարա	Եկեղեցիական մոտիվներ (գոբելեն)
Բեգինյան Ի.		Փարվանա(մետաքսանկար)

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել թեմաները 2015թ. փետրվարին հաստատելու պայմանով:

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ կրկին հանդես եկավ դեկան Ա.Շ. Մարգարյանը: Նա նշեց, որ 2014-2015թթ.ուստարվա սկզբից "Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի " ամբիոնի վարիչը իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից և անհրաժեշտություն կա թափուր պաշտոնում նշանակել ժամանակավոր պաշտոնակատար՝ ամբիոնի աշխատանքները կոորդինացնելու նպատակով: Կարևորելով նոր բացված "Դիզայն" մասնագիտության ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպումը և ՄԿԾ-ի վերանայումը ,ինչպես նաև բազմաթիվ այլ հարցեր, Ա.Մարգարյանը դիմեց խորհրդի անդամներին ՝առաջադրել թեկնածություններ: Վերոնշյալ ամբիոնի ասիստենտ Դ.Չիբուխչյանը ամբիոնի վարիչի պաշտոնում առաջադրեցին նույն ամբիոնի դասախոս Մ.Մելքումյանի թեկնածությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -„Դեկորատիվ - կիրառական արվեստի և դիզայնի"ամբիոնի ասիստենտ Ա.Լ.Չիբուխչյանը և հավանություն տվեց առաջարկին:

ՈՐՈՇԵՑԻՆ-Զեկուցագրով դիմել տնօրեն Ա.Ս.Առաքելյանին "Դեկորատիվ - կիրառական արվեստի և դիզայնի"ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Մ.Մելքումյանին:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Ռ.Մելքումյան